եւ ջանա՛[1] ամենայն ուժով տիրասէր լինել յայսմ հետէ եւ արդարամիտ եւ աշխարհաշէն. եւ ե՛րթ բարեաւ ի քո ընտանիս եւ յաշխարհին. եւ հասելոյ երբէք ի մէնջ հրամանի կազմ կաց եւ պատրաստ»:

ՂԷ. Եւ հրաժարեալ թագաւորին Վաղարշու[2] զսպարապետն Հայոց զտէրն Մամիկոնէից զՎահան եւ զամենայն նախարարս Հայոց՝ արձակէր խաղաղութեամբ: *2* Եւ եկեալ զաւրավարն Հայոց տէրն Մամիկոնենից Վահան յաշխարհս Հայոց, ամենայն ուխտապահ նախարարաւքն Հայոց. որում ընդ առաջ ելանէր սուրբ այրն Աստուծոյ կաթողիկոսն Հայոց Յոհան, պատուական նշանաւ խաչին եւ սուրբ նշխարաւք ճգնազգեաց նահատակին Գրիգորի, որովք եւ յուղարկեացն իսկ ի դուռն զամենեսեան: *3* Եւ պատահեալ սրբոյն Յոհանու կաթողիկոսին զաւրավարին Հայոց տեառն Մամիկոնենից Վահանայ եւ այլ նախարարացն Հայոց որ ընդ նմա եւ ամենայն զաւրուն բազմութեանն՝ ողջունէր զնոսա աւրհնութեան համբուրիւ, եւ ասէր ուրախալից սրտիւ. *Յնծացէ անձն իմ ի Տէր, զի զճգնեալ որդւոց եկեղեցւոյ իւրոյ ջնջեաց զքիրտն, որ վասն անուանն Քրիստոսի քրտնեցան. հանգոյց զաշխատութիւնն, մաքրեաց զաղտ զինուցն, լուաց զոգիսն հաւատարմացդ ուխտապահութեան ջրովն, եւ զգեցոյց ամենեցուն հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան. եւ որպէս փեսայից եդ պսակս, եւ որպէս հարսն արքայութեան իւրոյ զարդարեաց զձեզ զարդու*[ա]: *4 Շնորհեսցէ՛ բարեխաւսութեամբ սրբոց իւրոց՝ զարդարեալ զձեզ եւ այնու զարդու, որով զարդարին առաքեալն եւ մարգարէքն յաւուրն Քրիստոսի. զորոյ զարդու պայծառութեան տեսչութիւն, զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց*[բ]:

5 Եւ ասացեալ զայս ամենայն սրբոյ կաթողիկոսին, եւ աւրհնեալ զամենեսեան՝ նախ գային ի քաղաքն Վաղարշապատ որ այժմ անուանի Նոր քաղաք: *6* [3] Եւ ըստ սովորութեան իւրում սպարապետն Հայոց Վահան, ուխտակից նախարարաւքն Հայոց որ ընդ նմա էին՝ կային անդ աւուրս, եւ կատարէին զուխտս եւ զնուէրս ի սուրբ եկեղեցւոջն Կաթողիկէի, եւ ապա յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց կուսանաց, եւ հոգացեալ նախ զպէտս դարմանոյ աղքատացն՝ լցեալք կատարէին: *7* Գային միաբան ամենայն նախարարքն Հայոց եւ այլ բազմութիւն՝ զամենայն աւր մեծապէս ցնծութեամբ, սաղմոսիւք եւ ճառիւք հոգեւոր վարդապետաց եկեղեցւոյ սրբոյ. ուրախ լի-

1 *Ձ.* ջանայ

2 *Ձ. լուսանցքում ունի՝* վահան թագաւորէ

ա Հմմտ. Ես. ԿԱ 10:

բ Հմմտ. Բ Կոր. Բ 8:

3 *Ձ.* նոր քաղաք: Օրինեալ է աստուած